սակար են։ Եւրոպայէն հոն տարուած բոյսերը՝ հարաւային գաւառներու մէջ միայն քիչ մը առաջ կու գան, բայց հոն ալ երթալով կը փոխուին։

Բլաղայի բնակիչքը 1,500,000ի չափ կը սեպուին հիմա. առեւնոք շատ աւելի բազմամարդ էր երկիրը, բայց երթալով քիչցած են, վասն զի միակերպ պատերազմ ունին ցեղ ցեղի հետ, շատ տարածուած է մէջերնին ծաղիկ հիւանդութիւնը, և բարբարոս սովորութիւն մը ունին կամաւ խղդելու իրենց զաւակները։ Բայակուաս և Մաչիկոյ ըսուած ցեղերը մէջերնին աւելի գեղեցիկ են և կորիճ և աւելի ալ երկարակեաց ընդհանրապէս։ Ամեն ցեղ իրեն սեփական լեզուն ունի. Բայակուասները ձկնորսութեամբ կ'ապրին, ազատ են, և Եւրոպացւոց բարեկամ։ Բամբասները կը բնակին համանուն դաշտերու մէջ. կորիճ ձիաւոր են և Եւրոպացւոց թշնամի. որսորդութեամբ կ'ապրին։ Զարուսաք ալ սաստիկ թշնամի եղած են միշտ Եւրոպացւոց. ընդհանրապէս ամենքն ալ հեծեալք են և մերկ կը պտըտին, և վայրի եղներու մսով կը կերակրուին։ Ասոնցմէ 'ի զատ կան այս ցեղերս ալ, Կուանապք, Մպայապք, Մոդոպիք և Ապիբոնք։ Տէրութեան կրօնքը է Ուղղափառ Հռովմէական հաւատք։

Բլաղայի երկիրը տասնըչորս նահանգ կը բաժնուի որոնցմէ առջինն է

Պուէնոս Այրէս. նոյն անունով է իրեն մայրաքաղաքն ալ՝ զոր շինեցին Սպանիացիք 1581ին. շատ գեղեցիկ կլիմայ ունի, և այն պատճառաւ ալ ըսուած է Պուէնոս Այրէս, այսինքն բարի օդք։

ՃԱՇԱԿ ԻՏԱԼԱԿԱՆ ՔԵՐԹՈՒԹԵԱՆ

ՆՈՐԱՏԻՊ

ՀՈՒԳՈՆԻ ՓՈՍԿՈԼԵԱՑ

ՑԱՂԱԳՍ

ԳԵՐԵԶՄԱՆԱՑ

ՏԱՂ

ԹԱՐԳՄԱՆԵԱԼ

Ի Հ. Ա. Կ. ԲԱԳՐԱՏՈՒՆԻՈՑ

Այս Հուգոնի Փոսկոլեայ 'ի վերայ Գերեզմանաց Տաղ՝ մի է 'ի չքնաղ և հրաշակերտ սքանչելեաց Իտալական քերթուածեան դարուցս, անցելոյն և այժմուս, անուանի առ ամենայն իտալագէտս, վասն Ճշմարիտ Պինդարական խմաստիցն և ոճոյն, և առ այլս՝ Թարգմանութեամբ։

Ինչափ է գեղեցկութիւն սորա, մինչև հմտից ոմանց զգաստից Իտալացւոց անաչառ խոստովան լինել՝ թէ յառաջ քան զայս և ոչ գրեթէ մի քնարական երգ էր նոցա այդմ անուան արժանի, թէպէտ և սա դիւցազնական չափովք է յօրինեալ, և ոչ բուն քնարականք։

Քաղցր է և մեղ յիշատակել, և խնդամբ ընդ Աղդիս, զի և 'ի նմա գտան բանիբունք յերիտասարդ մուսայասիրաց Վարժարանացս, որոց ծանուցեալ զյարգ և զհամ Տաղիս, ստիպեցին ըզմեզ բանիւ և գրով՝ տալ զսա նոցա և այլոց ընթեռնուլ հայերէն. ոչ ինչ երկմտեալ՝ թէ գուցէ հայն կորուսանիցէ զընորհսն և զվսեմութիւնն։ Թերևս և օգուտ ևս նկատեալ նոցա 'ի սմին քաղաքացն այնոցիկ՝ առ որս գերեզմանական բարեպարիշտ գթասիրութիւն ապախտ անկեալ կայ 'ի խառնիխուռն անծանօթ և անյայտ թաղման սիրելեաց և յարգաւորաց։

Ելին զհետ սորա և նախանձաւորք ոմանք 'ի նմանօրինակ տաղս այլ ոչ ոք տակաւին եհաս սմա։ Են քերթողիս և սուղ ինչ տեղեկութիւնք 'ի վերայ սորա՝ հմտականք և բաւականք առ իւրան, այլ ոչ առ մեզ. յորոց ընտրեալ մեր զկարևորսն, զթերին լցուցաք 'ի մերոցն բաւականութիւն։